ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4722-Ա « 21 » նոյեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի Հ.3707-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով լ/ա Ստանիսլավ Համբարձումյանի 18.11.2025թ. հ.Դ-127605-25 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2025 թվականի սեպտեմբերի 11-ի «Անշարժ գույքերին հասցեներ տրամադրելու մասին» հ.3707-Ա որոշման հավելվածի 3-րդ կետը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
21.11. 2025թ.
հ. 4722 -Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Անահիտ Հարությունյան /լիազորված անձ/ Վարդան Ալեքսանյան և Սուսան Ստեփանյան	Ա. Խաչատրյան փողոց, հ.20 շենք	տարածք	Վարդան Ալեքսանյանին և Սուսան Ստեփանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Ա. Խաչատրյան փողոցի հ.20 շենքում գտնվող բնակելի տարածքին /սեփ. վկ.հ.494826/ տրամադրել հասցե՝ Ա. Խաչատրյան փողոց, հ.20 շենք, հ.58/1	01033YK9BCHF	
2	Գրիգոր Քալաշյան /լիազորված անձ/ Աշոտ Թորոսյան /սեփականատեր/	Վերին Շենգավիթ 1-ին փողոց, հ.27ա	բնակելի տուն	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 08.08.2017թ. հ.3439 վկայագրով, Աշոտ Թորոսյանին փոխանցված, Վերին Շենգավիթ 1-ին փողոցի հ.27ա հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Վերին Շենգավիթ 1-ին փողոց, հ.27/6	01113MTEPFQJ	
3	Լևոն Ամիրաղյան /լիազորված անձ/ Կարինե Արսենյան, Սերգեյ Ասրիյանց /սեփականատեր/	Կոմիտասի պողոտա, հ.19/1 շենք, հ.1/2	բնակարան	Կարինե Արսենյանին և Սերգեյ Ասրիյանցին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Կոմիտասի պողոտայի հ.19/1 շենքի հ.1/2 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.01052025-01-0021/ բաժանման հատակագծով առանձնացվող 34.6քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Կոմիտասի պողոտա, հ.19/1 շենք, բն.1/3	01033S8RNPMV	
4	Վազգեն Բոռբոռյան /լիազորված անձ/ Ստանիսլավ Համբարձումյան	Վազգեն Սարգսյան փողոց, հ.10 շենք, հ.53	բնակարան	Ստանիսլավ Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող, Վազգեն Սարգսյանի փողոցի հ.10 շենքի հ.53 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.08052014-01-0214/ բաժանման հատակագծով առանձնացվող 179.76քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Վ. Սարգսյան փողոց, հ.10 շենք, բն.53/1	01063UBDHEPP	

5	Վահե Օսեյան	Ծերենցի փողոց, հ.25	բնակելի տուն	Վահե Օսեյանին սեփականության իրավունքով պատկանող, Ծերենցի փողոցի հ.25 հասցեում գտնվող բնակելի տան /վկ. հ.11012023-01-0081, հեղ. ընդ. բաժ. 829.5քմ, շին. 65.2քմ և 16.8քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 246.0քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ծերենցի փողոց, հ.25/1	0107394QQALC	
6	Վահե Օսեյան	Ծերենցի փողոց, հ.25	բնակելի տուն	Վահե Օսեյանին սեփականության իրավունքով պատկանող, Ծերենցի փողոցի հ.25 հասցեում գտնվող բնակելի տան /վկ. հ.11012023-01-0081, հեղ. ընդ. բաժ. 829.5քմ, շին. 65.2քմ և 16.8քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 228.7քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ծերենցի փողոց, հ.25/2	010739AXRNNE	
7	Վահե Օսեյան	Ծերենցի փողոց, հ.25	բնակելի տուն	Վահե Օսեյանին սեփականության իրավունքով պատկանող, Ծերենցի փողոցի հ.25 հասցեում գտնվող բնակելի տան /վկ. հ.11012023-01-0081, հեղ. ընդ. բաժ. 829.5քմ, շին. 65.2քմ և 16.8քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 164.2քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ծերենցի փողոց, հ.25/3	01073X4RTPMX	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**